Հայտարարություն

Խստորեն քննադատում ենք Ռուսաստանի կողմից Ուկրաինայում իրականացվող ռազմական գործողությունները

4 մարտի, 2022 թ.

Մենք ամենայն խստությամբ դատապարտում ենք Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայում իրականացվող հարձակվողական ռազմական գործողությունները և կոչ ենք անում Ռուսաստանին անվերապահորեն դադարեցնել հարձակումը և դուրս բերել զորքերը գրավյալ տարածքներից։

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ խոսքը հաճախ նենգափոխվում է։ Այնուամենայնիվ, մենք, որպես «լեզու» ուսումնասիրող հետազոտողներ, ուզում ենք հստակորեն պնդել. «Գրիչը սրից առավել ուժեղ է»։

Լեզուների նմաններությունները և տարբերությունները հաճախ են տարբեր հակամարտություններում օգտագործվել։ Այդ ամենի խիստ դատապարտումը բերել է նաև նրան, որ միջազգային հասարակությունը ստեղծել է լեզվի, մշակույթի և այլ խնդիրները ոչ բռնի կերպով լուծելու մեխանիզմներ։ Ռուսաստանի կողմից Ուկրաինայի վրա հարձակումը լիովին անտեսում է այդ մեխանիզմները։

Ցավակցություն ենք հայտնում սույն ռազմական հարձակման հետևանքով զոհված անձանց հարազատներին, ինչպես նաև մեր աջակցությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց ձայնն են բարձրացնում այս հարձակման դեմ։ Խստորեն քննադատում ենք նաև ռուսական քաղաքացիությամբ անձանց հանդեպ վիրավորանքներն ու զրպարտանքները։

Բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն երկխոսության և այլ խաղաղ միջոցներով։

Բազմալեզու հասարակության ասոցիացիա, Բազմալեզվության երևույթի ասոցիացիա, «Լեզու և հասարակություն» հանդեսի խմբագրական կազմ